ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-20-Ը ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ (Ք.ՄՈՍԿՎԱ) ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը.

Արմեն Սիմոնյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Ռուսաստանի Դաշնություն (ք.Մոսկվա) 2024թ. դեկտեմբերի 18-20-ը

4. Հրավիրող կողմը.

Ռուսաստանի Դաշնության Կառավարություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Նպատակը՝ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 23-րդ նիստի մասնակցություն:

6. Քննարկված թեմաները.

Քննարկվել են 2025 թվականի համար երրորդ երկրներ և երրորդ երկրներից ավտոմոբիլային միջազգային բեռնափոխադրումների թույլտվությունների քանակի, ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների Համատեղ հանձնաժողովի նիստ կազմակերպելու հարցը, տրանսպորտային անվտանգության ոլորտում երկկողմ համագործակցության վերաբերյալ, «Խաղաղության խաչմերուկ» նախագծին ռուսական կողմի հնարավոր մասնակցության վերաբերյալ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հանդիպման ընթացքում քննարկվել են դեպի երրորդ երկրներ և երրորդ երկրներից 2025 թվականի համար ավտոմոբիլային միջազգային բեռնափոխադրումների թույլտվությունների չափաքանակի վերաբերյալ, երկաթուղային ուղղևորափոխադրումների սուբսիդավորման նոր մեխանիզմների մշակման, օդային փոխադրումների դեպքում հայկական ավիաընկերություններին օդանավակայնային և աերոնավիգացիոն սակագների ձևավորման վերաբերյալ, ինչպես նաև օրակարգում ներառված այլ հարցեր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ժամանակ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի համանախագահների կողմից ստորագրվել է 23-րդ նիստի արձանագրությունը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

25.12.2024թ.